

Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի  
խորհրդի 30/06/2016թ թիվ 20-Լ որոշմամբ  
Փոփոխված է  
30/08/2016թ թիվ 34-Լ որոշմամբ  
26/09/2016թ թիվ 38-Լ որոշմամբ  
28/02/2017թ թիվ 12-Լ որոշմամբ  
26/12/2017թ թիվ 63-Լ որոշմամբ  
26/04/2018թ թիվ 12-Լ որոշմամբ  
08/11/2018թ թիվ 65-Լ որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է  
ՀՀ կենտրոնական բանկում  
«\_\_» \_\_\_\_\_ 2018թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ  
\_\_\_\_\_ Արթուր Զավադյան

Հայաստանի Ավտոապահովագրողների  
Բյուրոյի խորհրդի նախագահ

\_\_\_\_\_ Ներսես Երիցյան

## ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-007

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈՅԻ

(ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ  
ՀԱՎԱՔԱԳՐՎՈՂ ՈՐՈՇ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԻՐԱՎԱՍՈՒ  
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՅԴ ՎՃԱՐՆԵՐԸ ԲԱՇԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ)

ԵՐԵՎԱՆ – 2018

1. Սույն կանոններով կարգավորում են՝

1) Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմինների (այսուհետ՝ ՃՈ) կողմից ճանապարհատրանսպորտային պատահարների գրանցման գործընթացում հավաքագրվող՝ սույն կանոնների պահանջներին բավարարող ելակետային տվյալների (այսուհետ՝ ելակետային տվյալներ) ձեռք բերման նպատակով Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի (այսուհետ՝ Բյուրո) կողմից ՃՈ-ի հետ համաձայնագրի կնքման հետ կապված հարաբերությունները,

2) ելակետային տվյալների նկատմամբ նվազագույն պահանջները և դրանք Բյուրոյի հետ համաձայնեցնելու գործընթացը,

3) ելակետային տվյալների տրամադրման դիմաց վճարումների կատարման կարգը,

4) ելակետային տվյալների տրամադրման համար կատարվող վճարումների չափը,

5) ելակետային տվյալների հավաքագրման համար կատարված վճարումների՝ Բյուրոյին անդամակցող ապահովագրական ընկերությունների (այսուհետ՝ Ապահովագրողներ) միջև բաշխելու սկզբունքները և գործընթացը:

2. Բյուրոն Ապահովագրողների լիազորությամբ և վերջինների հաշվին ՃՈ-ի հետ կնքում է համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր), իսկ Ապահովագրողները կնքված Համաձայնագրի և սույն կանոնների հիման վրա կատարում են վճարումներ հետևյալ պայմաններին՝ բավարարող ճանապարհատրանսպորտային պատահարների գծով հավաքագրված ելակետային տվյալների ձեռք բերման համար՝

1) պատահարը տեղի է ունեցել համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության տարածքում,

2) պատահարի գծով օրենքով և Բյուրոյի կանոններով սահմանված դեպքերում ու կարգով պատահարին ներգրավված վարորդների միջև լրացված չէ համաձայնեցված հայտարարագիր,

3) պատահարի գծով օրենսդրությամբ սահմանված կարգով չի իրականացվել վարչական և (կամ) քրեական վարույթ,

4) ելակետային տվյալները համապատասխանում են Համաձայնագրով ելակետային տվյալների կազմի և կառուցվածքի նկատմամբ սահմանված տեխնիկական պահանջներին,

5) հավաքագրված ելակետային տվյալները սահմանված կարգով և ժամկետում ՃՈ-ի կողմից մուտքագրված են Համաձայնագրով նախատեսված միասնական էլեկտրոնային հարթակում:

3. Ելակետային տվյալների կազմն ու կառուցվածքը, յուրաքանչյուր պատահարի գծով Ելակետային տվյալների ձեռք բերման համար վճարման ենթակա գումարի չափը, ինչպես նաև Ելակետային տվյալների համար ՃՈ-ին վճարման կարգը, ժամկետները և գործընթացը սահմանվում են Համաձայնագրով:

4. Ելակետային տվյալների փոխանցման համար նախատեսված՝ սույն կանոնների 2-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսված միասնական էլեկտրոնային հարթակի նկարագրությունը և դրա օգտագործման ուղեցույցը տրամադրվում է Բյուրոյի կողմից ՃՈ-ին՝ Համաձայնագրի գործողության մեջ մտնելուց առնվազն 10 օր առաջ, իսկ դրանում

կատարված փոփոխությունները՝ ենթադրվող փոփոխության ամսաթվից առնվազն 10 օր առաջ:

5. Ապահովագրողների կողմից Համաձայնագրի համաձայն ՃՈ-ին յուրաքանչյուր ամսվա համար վճարման ենթակա գումարը նրանց միջև բաշխվում է տվյալ ամսվան նախորդող ամսվա ընթացքում բոլոր Ապահովագրողների կողմից ԱՊՊԱ պայմանագրերի գծով հաշվեգրված ապահովագրավճարների հանրագումարում յուրաքանչյուր Ապահովագրողի կողմից ԱՊՊԱ պայմանագրերի գծով հաշվեգրված ապահովագրավճարների տեսակարար կշռին համապատասխան: Յուրաքանչյուր Ապահովագրողի կողմից ՃՈ-ին վճարման ենթակա գումարի չափի մասին տեղեկացման և Ապահովագրողների կողմից վճարման պարտավորության կատարման կարգն ու պայմանները սահմանվում են Համաձայնագրով:

6. Համաձայնագիրը և դրանում կատարվող փոփոխությունները և (կամ) լրացումները նախապես համաձայնեցվում են Բյուրոյի խորհրդի հետ՝ բացառությամբ Համաձայնագրի կողմերի և դրանց անունից հանդես եկող անձանց անհատականացնող տվյալներին ու վավերապայմաններին վերաբերող դրույթների, որոնք ենթակա չեն համաձայնեցման: